Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 4/01/2206-21 «7» 12 2021թ.

«ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Հ. Բրուտյանին

Հարգելի տիկին Բրուտյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 23-ին կնքել է «ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի միջնակարգ դպրոցի «Սանհանգույցների վերանորոգում» վերանորոգման աշխատանքների կատարման պետական գնման ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 պայմանագիրը: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից **75** օր: Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից, այն է՝ 2021թ. ապրիլի 23-ից, ավարտը նախատեսված էր 2021թ. հուլիսի 07-ին: Սակայն, փաստացի շինարարական աշխատանքները մինչ օրս ավարտված չեն:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտելու համար ժամկետ տրամադրելու և տույժերի կրառման մասին ՀՏԶՀ-ն ս.թ. հուլիսի 23-ին, օգոստոսի 11-ին, հոկտեմբերի 05-ին և հոկտեմբերի 26-ին «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին է ներկայավրել համապատասխանաբար ՈԵ/01/1337-21, ՈԵ01/1460-21, ՈԵ/01/1801-21 և ՈԵ/01/1927-21 գրությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 Պայմանագրով նախատեսված վերանորոգման աշխատանքները ժամանակին չեն ավարտվել և դրանց ընթացքի մասին Պատվիրատուի կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ, ինչպես նաև այն, որ մինչև ս.թ. դեկտեմբերի 01-ը իրականացվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների 68 տոկոսը, որի համար Կապալառուին 2021թ. հուլիսի 06 վճարված **1,684,332** դրամի հետ մեկտեղ ենթակա է վճարման ևս **2, 571,310** դրամ , և հիմք ընդունելով ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 պայմանագրի 2.1.3 (բ) ենթակետի, 5.2, 5.3 և 7.9 կետերի դրույթները կայացվել է որոշում.

1. Համարել պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/43 Պայմանագիրը լուծված.
2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար չկատարված աշխատանքի գնի 0, 05% չափով, որը **104** աշխատանքային օրվա համար կազմում է՝ **236,570** դրամ.
3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ **6,233,759** դրամի 0,5 տոկոսի չափով, որը կազմում է՝ **31,169** ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

Նշված գումարները խնդրում ենք սույն փաստաթուղթը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի բանկային հաշվին՝ Արարատբանկ ԲԲԸ, h/h 1510032335590400:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 Պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏԶՀ-ն մտադիր է պահանջ ներկայացնել «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին՝ **624,000** ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն 07/12/2021 **Ա. Սողոմոնյան**

X

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Կատարող՝ Ա. Իսախանյան
Հեռ. (010) 24 71 23/106